ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

04 ապրիլի 2019 թվականի թիվ 92 - Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՈՒ ՖԵՐՄԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ԱՆՀԱՏՆԵՐԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ, ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՐԳԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆ, ԼՍՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետով՝

կարգադրում եմ.

1. Գյուղատնտեսության ոլորտում ՀՀ Տավուշի մարզի գյուղացիական ու ֆերմերային տնտեսություններին, տնտեսվարող անհատներին և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի սուբսիդավորման, աջակցությամբ ու համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի կարգի և գործընթացի իրազեկման ու քննարկման, լսումներ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Աղաբեկ Գալստյան - Խմբի ղեկավար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչության ՏՍ համակարգման բաժնի վարիչի պաշտոնակատար

Անդամներ՝

Արկադի Ամիրխանյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ

Զարմաիլ Մարդանյան - Գյուղատնտեսության ոլորտի առաջատար փորձագետ /համաձայնությամբ/

2. Աշխատանքային խմբին՝ կազմել ժամանակացույց և ըստ ժամանակացուցի մարզի տարածաշրջաններում կազմակերպել հանդիպումներ ու լսումներ գյուղացիական ու ֆերմերային տնտեսությունների, տնտեսվարող անհատների և իրավաբանական անձանց հետ՝ սուբսիդավորմամբ տրամադրվող վարկերի, աջակցությամբ ու համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի տրամադրման կարգի և գործընթացի վերաբերյալ:
3. Հանդիպումներին և քննարկումներին ապահովել վարկավորող կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը:
4. Հանդիպումների արդյունքների վերաբերյալ կազմել արձանագրություն ու ներկայացնել մարզպետին:
5. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ պատշաճ ձևով կազմակերպել գործընթացի լուսաբանումը:

ՄԱՐԶՊԵՏ ՀՀ.ՉՈԲԱՆՅԱՆ

05.04.2019

X